ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2026թ. **№_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 1-ին հարկի, 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով տրամադրել «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 1-ին հարկի, 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով տրամադրել «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությանը:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող գույքը (0.498075հա հողամաս, 25809.96քմ շինություն) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությունն իր կանոնադրության համաձայն՝ իրականացնում է գործունեություն ուղղված Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը, համայնքների կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև պետական և համայնքային կառույցների միջև համագործակցության խթանմանը: «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության կողմից աշխատանքների պատշաճ կազմակեպման համար իրականացվում են աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ և մասնագիտական միջոցառումներ՝ ի շահ համայնքների և տեղական ժողովրդավարության զարգացմանը:

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաև ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.463-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ